ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2025 թվականի N 521-Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ և 688-րդ հոդվածների, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածի և «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին ամրացված՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Եղվարդի խճուղու միջնամասից Հալաբյան փողոցի վերջնամասի ոռոգման ջրատար (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 22122022-01-0382) համակարգը՝ 179 383.1 հազար դրամ հաշվեկշռային արժեքով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Երևան»

ջրօգտագործողների ընկերությանը (գրանցման համարը՝ 269.230.02841)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում «Երևան» ջրօգտագործողների ընկերության տնօրենի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի կնքման և հանձնման-ընդունման գործընթացը՝ նշված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելով «Երևան» ջրօգտագործողների ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ